ԳՅՈՒՄՐՈՒ 3 ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ԱՄԵՆԱՊԱՀԱՆՋՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հետազոտողներ

Սեդա Ոսկանյան

Աննա Խաչատրյան

Աստղիկ Ոսկանյան

Մարիամ Ադամյան

Խմբագիր՝

Արփինե Վարդանյան

Այս հետազոտական աշխատանքը ստեղծվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «ԵՄ-ն հանուն երիտասարդների. Ուսանողական ժողովրդավարություն հիմա» ծրագրի շրջանակներում: Հետազոտության բովանդակության համար պատասխանատու է «Հարթակ» հետազոտական կենտրոն հասարակական կազմակերպությունը: Բովանդակությունը կարող է չհամընկնել Եվրոպական միության և ծրագիրն իրականացնող գործընկեր կազմակերպությունների, այդ թվում՝ Եվրասիա համագործակցության հիմնադրամի, «Ռեստարտ» գիտակրթական բարեգործական հիմնադրամի և Հայաստանում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի տեսակետների հետ:

Գյումրի 2022

Բովանդակություն

1. Հետազոտական մաս----------3
2. Շիրակի պետական համալսարանի 2020-2023 թվականների մասնագիտությունների և դիմորդների թվաքանակը----------4
3. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի 2020-2023 թվականների մասնագիտությունների և դիմորդների թվաքանակը----------10
4. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի 2020-2023 թվականների մասնագիտությունների և դիմորդների թվաքանակը----------15
5. Եզրակացություն----------19

Հետազոտական մաս

Թեմայի արդիականությունը

Ուսանողները մեր վաղվա ապագան են, այդ իսկ պատճառով շատ կարևոր և արդիական է իմանալ, թե ամենաշատը որ մասնագիտություններն են պահանջված շուկայում և որոնք են ընտրում ուսանողները։

Նպատակը

Դիտարկել Շիրակի պետական համալսարանի (ՇՊՀ), Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի (ՀՊՏՀ) և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի (ՀԱՊՀ) 2020-2023թթ. ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ընդունելության ընթացքում ամենապահանջված մասնագիտությունները։

Խնդիրները

- բացահայտել երեք համալսարաններում վերջին երեք տարիներին առավելագույն թվով դիմորդներ ունեցող բաժինները,
- բացահայտել դիտարկվող բուհերում երեք տարիների ընթացքում առավելագույն թվով դիմորդներ ունեցող բաժինների դինամիկան,
- բացահայտել յուրաքանչյուր համալսարանի ամենապահանջված բաժիններն ըստ դիմորդների քանակի։

Շիրակի պետական համալսարանի 2020-2023 թվականների մասնագիտությունների և դիմորդների թվաքանակը

Ըստ 2020-2021թթ. ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ընդունելության արդյունքների ՇՊՀ-ի ամենապահանջված չորս մասնագիտություններն են՝ **Ֆիզիկական դաստիարակություն, Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն), Անգլերեն լեզու և գրականություն, Նախնական զինվորական պատրաստություն** (գրաֆիկ 1)[1]:

Ըստ 2021-2022թթ. ՇՊՀ-ի բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի ընդունելության արդյունքների տվյալների ամենապահանջված չորս մասնագիտություններն են՝ **Հոգեբանություն, Ֆիզիկական դաստիարակություն, Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն)** (գրաֆիկ 2)[2]:

2022-2023թթ.-ի ուստարվա բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման ընդունելության տվյալների համաձայն ՇՊՀ-ի ամենապահանջված երեք մասնագիտություններն են՝ **Անգլերեն լեզու և գրականություն, Սերվիս, Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն), Պատմություն, Հոգեբանություն**: Հայտարարվել է մրցույթ բակալավրի առկա 31 մասնագիտություններում, որից 12-ում՝ **Աշխարհագրություն, Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի), Քարտեզագրություն և կադաստրային գործ, Մաթեմատիկա, Շուկայագիտություն, Քաղաքագիտություն, Միջմշակութային հաղորդակցություն, Համակարգչային գրաֆիկա, Զբոսաշրջություն դիմորդներ չեն եղել** (գրաֆիկ 3) [3]:

---

[1] Շիրակի պետական համալսարանի 2020-2021թթ. ընդունելության արդյունքները https://shsu.am/masters-degree-results-2020-21/

[2] Շիրակի պետական համալսարանի 2021-2022թթ.ընդունելության արդյունքներ, https://shsu.am/announcement-101/

[3] Շիրակի պետական համալսարանի 2022-2023թթ. ընդունելության արդյունքները, https://shsu.am/announcement-154-1/

Գրաֆիկ 1


2020-2021թթ. Շիրակի պետական համալսարանի դիմորդների թվաքանակն ըստ բաժինների
Մաթեմատիկա 1
Շուկայագիտություն 1
Դեղագործական քիմիա 1
Ֆիզիկա 1
Զբոսաշրջություն 2
Դեկորատիվ կիրառական արվեստ 3
Աշխարհագրություն 3
Լրագրություն 4
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 4
Քարտեզագրություն և կադաստրային գործ 4
Տեղեկատվական տեխնոլոգիաներ 5
Հաշվ. հաշվառում և հարկում 5
Միջմշակութային հաղորդակցություն 6
Ինֆորմատիկա և կիրառական... 6
Կենսաբանություն 6
Միջմշակութային հաղորդակցություն 7
Քաղաքագիտություն 8
Սերվիս 9
Սոցիալական աշխատանք 9
Սոցիոլոգիա 11
Ռուսաց լեզու և գրականություն 11
Համակարգչային գրաֆիկա 12
Պատմություն 12
Կառավարում 13
Թարգմանչական գործ՝ անգլերեն և ռուսերեն 14
Հայոց լեզու և գրականություն 14
Հոգեբանություն 20
Նախնական զինվորական պատրաստություն 29
Անգլերեն լեզու և գրականություն 29
Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն 30
Ֆիզիկական դաստիարակություն 41

Գրաֆիկ 2


2021-2022թթ. Շիրակի պետական համալսարանի դիմորդների թվաքանակն ըստ բաժինների
Ֆիզիկա 0
Քաղաքագիտություն 0
Շուկայագիտություն 0
Մաթեմատիկա 0
Զբոսաշրջություն 0
Միջմշակութային հաղորդակցություն 1
Համակարգչային գրաֆիկա 2
Թարգմանչական գործ՝ անգլերեն-... 2
Հաշվապահական հաշվառում և... 3
Քարտեզագրություն և կադաստրային... 5
Ռուսաց լեզու և գրականություն 6
Կառավարում 6
Դեղագործական քիմիա 6
Աշխարհագրություն 6
Տեղեկատվական տեխնոլոգիաներ 7
Կենսաբանություն 7
Լրագրություն 8
Սոցիոլոգիա 9
Ինֆորմատիկա և կիրառական... 9
Դեկորատիվ կիրառական արվեստ 10
Հայոց լեզու և գրականություն 14
Անգլերեն լեզու և գրականություն 14
Պատմություն 15
Սերվիս 19
Տարրական մանկավարժություն և... 20
Նախնական զինվորական... 20
Թարգմանչական գործ՝անգլերեն-... 30
Ֆիզիկական դաստիարակություն 31
Հոգեբանություն 37

Գրաֆիկ 3


2022-2023 թթ. Շիրակի պետական համալսարանի դիմորդների թվաքանակն ըստ բաժինների
Մաթեմատիկա 0
Շուկայագիտություն 0
Ֆիզիկա 0
Զբոսաշրջություն 0
Աշխարհագրություն 0
Քարտեզագրություն և կադաստրային գործ 0
Հաշվ. հաշվառում և հարկում 0
Միջմշակութային հաղորդակցություն 0
Քաղաքագիտություն 0
Համակարգչային գրաֆիկա 0
Ֆիզիկական դաստիարակություն 0
Լրագրություն 1
Սոցիոլոգիա 1
Ռուսաց լեզու և գրականություն 1
Դեղագործական քիմիա 3
Կենսաբանություն 3
Հայոց լեզու և գրականություն 3
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա 4
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 5
Տեղեկատվական տեխնոլոգիաներ 5
Դեկորատիվ կիրառական արվեստ 9
Սոցիալական աշխատանք 9
Նախնական զինվորական պատրաստություն 9
Թարգմանչական գործ՝ անգլերեն և ռուսերեն 10
Կառավարում 11
Հոգեբանություն 14
Պատմություն 17
Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն 17
Սերվիս 21
Անգլերեն լեզու և գրականություն 26

Ստորև ներկայացված է ՇՊՀ-ի 2020-2023 թթ. ուստարվա բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի ընդհանուր առարկաների դինամիկան:

Գրաֆիկ 4



Ընդհանուր տվյալների վերլուծության հիման վրա ունենք հետևյալ թվային պատկերը՝ Շիրակի պետական համալսարանում **2020-2021թթ.** ուսումնական տարվա ընթացքում բուհը ունեցել է **321 դիմորդ, 2021-2022թթ.՝ 305, 2022-2023 թթ.՝ 169 դիմորդ : Երեք տարվա ընթացում Շիրակի պետական համալսարանը ունեցել է 795 դիմորդ** (Գրաֆիկ 5):

ՇՊՀ-ում ուսումնասիրությունը ցույց տվեց, որ անկախ ուսանողների ընդհանուր թվից, տարբեր տարիներում ամենամեծ խմբերը կազմում են **Թարգմանչական գործ, Հոգեբանություն, Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ մասնագիտությունները:**

Գրաֆիկ 5



2020-2023 թթ. Ճիրակի պետական համալսարանի դիմորդների թվի դինամիկան

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի 2020-2023 թվականների մասնագիտությունների և դիմորդների թվաքանակը

Հետազոտության համար ընտրված հաջորդ համալսարանը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղն է:

Ըստ 2020-2021թթ. ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ընդունելության արդյունքների ամենաշատ դիմորդներ ունեցող մասնագիտություններն են **Տեղեկատվական տեխնոլոգիաները, Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկան, Համակարգչային գրաֆիկան** (գրաֆիկ 6)[4]:

Գրաֆիկ 6



Ըստ 2021-2022թթ. ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ընդունելության տվյալների ՀԱՊՀ-ի Գյումրու մասնաճյուղի

[4] Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի 2020-2021 թթ. ընդունելության արդյունքները, http://npuagb.am/hy/news/yndunelutyan-ardyunqner-2020/

ամենապահանջված երեք մասնագիտություններն են **Տեղեկատվական տեխնոլոգիաները, Համակարգչային գրաֆիկան, Էլեկտրոնիկան (գրաֆիկ 7)** [5][6]

Գրաֆիկ 7



2022-2023թ. ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ընդունելության արդյունքների ՀԱՊՀ-ի Գյումրու մասնաճյուղի ամենապահանջված երեք մասնագիտություններն են **Տեղեկատվական տեխնոլոգիաները, Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկան, Էլեկտրոնիկան** (գրաֆիկ 8)[7]:

---

[5] Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի 2021-2022 թթ. ընդունելության արդյունքները
https://tinyurl.com/mr354jfr

[6] Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի 2021-2022 թթ. ընդունելության արդյունքները
https://tinyurl.com/msbuu4vx

[7] Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի 2022-2023 թթ. ընդունելության արդյունքները
https://www.facebook.com/polytechgyumri/posts/5178407758933078

Գրաֆիկ 8



ՀԱՊՀ-ի Գյումրու մասնաճյուղի 2020-2023թթ.-ի ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ընդունելության արդյունքների հիման վրա ստորև ներկայացնում ենք համալսարանի երեք տարիների ընդհանուր առարկաների դինամիկան (Գրաֆիկ 9)։

Գրաֆիկ 9



Գրաֆիկից պարզ է դառնում, որ համալսարանի հիմնական մասնագիտություններում դիմորդների թվաքանակը նվազել է: Կան մասնագիտություններ, որոնց դինամիկան երեք տարիների ընթացքում գրեթե չի փոփոխվել և դիմորդներներ չեն եղել:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղում **2020-2021թթ.** ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ընդունելության արդյունքում բուհը ունեցել է **76 դիմորդ, 2021-2022թթ.՝ 68 , 2022-2023 թթ.՝ 50 դիմորդ : Երեք տարվա ընթացում ՀԱՊՀ-ի Գյումրու մասնաճյուղն ունեցել է 194 դիմորդ** (Գրաֆիկ 10):

Գրաֆիկ 10



2020-2023 թթ. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի դիմորդների թվի դինամիկան

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղում ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ընդհանուր ուսանողների դինամիկան նվազել է և հիմնական մրցակցային առարկաներն են **Տնտեսագիտությունը, Տեղեկատվական տեխնոլոգիաները, Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկան:**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի 2020-2023 թվականների մասնագիտությունների և դիմորդների թվաքանակը

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի 2020-2021թթ.-ի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ընդունելության տվյալների համալսարանը դիմորդներ ունեցել է հետևյալ երեք մասնագիտություններով՝ **Կառավարում, Ֆինանսներ, Հաշվապահական հաշվառում և հարկում** (գրաֆիկ 11)[8] [9] [10]:

Գրաֆիկ 11



2021-2022թթ. ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ընդունելության արդյունքների ՀՊՏՀ-ի Գյումրու մասնաճյուղն ունեցել է հետևյալ երեք մասնագիտությունները՝ **Ֆինասներ, Կառավարում, Հաշվապահական**

---

[8] Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի 2020-2021 թթ. ընդունելության արդյունքները
https://tinyurl.com/57t6np2k

[9] Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի 2020-2021 թթ. ընդունելության արդյունքները
https://tinyurl.com/yvahru99

[10] Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի 2020-2021 թթ. ընդունելության արդյունքները
https://tinyurl.com/yc495z39

հաշվառում և հարկում: Ի տարբերություն նախորդ տարվա, ավելացել է ևս մեկ մասնագիտություն՝ **Շուկայագիտություն** (գրաֆիկ12)[11] [12]:

Գրաֆիկ 12



Ըստ 2022-2023թ. ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ընդունելության տվյալների ՀՊՏՀ-ի Գյումրու մասնաճյուղի ամենապահանջված երկու մասնագիտություններն են **Կառավարումը և Ֆինանսները** (գրաֆիկ 13)[13]:

[11] Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի 2021-2022 թթ. ընդունելության արդյունքները
https://bit.ly/3j20OCZ
[12] Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի 2021-2022 թթ. ընդունելության արդյունքները
https://tinyurl.com/3nmnud5z
[13] Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի 2022-2023 թթ. ընդունելության արդյունքները
https://bit.ly/3aMy9BS

Գրաֆիկ 13



Գրաֆիկ 14-ում ներկայացված է ՀՊՏՀ-ի Գյումրու մասնաճյուղի 2020-2023թթ.-ի ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման երեք տարիների դիմորդների թվաքանակի ընդհանուր դինամիկան:

Գրաֆիկ 14



Ինչպես երևում է գրաֆիկում՝ **Շուկայագիտություն, Հաշվապահական հաշվառում և հարկեր, Ֆինանսներ** մասնագիտությունները երեք տարիների ընթացքում գրանցել են դիմորդների թվաքանակի աճ: **Կառավարում** մասնագիտությունում երեք տարիների ընթացքում նվազել է դիմորդների թիվը, ամենաշատ թվով դիմորդներ եղել է 2020-2021թթ.-ին: Համալսարանում կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսանողների աճ է գրանցվել, ամենաշատ դիմորդները եղել են **Կառավարում և Ֆինանսներ բաժնում:**

Ընդհանուր թվային տվյալների հետազոտության հիման վրա ունենք հետևյալ թվային պատկերը.

ՀՊՏՀ-Ի Գյումրու մասնաճյուղում 2020-2021թթ. ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ընդունելության ընթացքում բուհը ունեցել է **91 դիմորդ, 2021-2022թթ.՝ 96 , 2022-2023 թթ.՝ 114 դիմորդ : Երեք տարվա ընթացում ՀՊՏՀ-ի Գյումրու մասնաճյուղն ունեցել է 301 դիմորդ** (գրաֆիկ 15):

Գրաֆիկ 15



2020-2023 թթ. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի դիմորդների թվի դինամիկան

Եզրակացություն

Շիրակի պետական համալսարանի (ՇՊՀ), Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի (ՀՊՏՀ) և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի (ՀԱՊՀ) 2020-2023թթ. ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ընդունելության արդյունքների փաստաթղթային հետազոտությունը ցույց է տվել, որ

1. Շիրակի պետական համալսարանում, անկախ ուսանողների ընդհանուր թվից, տարբեր տարիներում ամենամեծ խմբերը կազմում են **Լեզուներ և Թարգմանչական գործ մասնագիտություններում**:
2. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղում ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսանողների աճ է գրանցվել, ակներև է այն փաստը, որ այս երեք համալսարաններից ամենաքիչ մասնագիտություններն ունի հենց այս համալսարանը, ամենաշատ դիմորդները **Կառավարում և Ֆինանսներ** բաժնում են:
3. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղում ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ընդհանուր ուսանողների դինամիկան նվազել է, իսկ հիմնական մրցակցային բաժիններն են **Տնտեսագիտությունը, Տեղեկատվական տեխնոլոգիաները, Ինֆորմատիկա-կիրառական մեխանիկան**:

Ընդհանուր հետազոտության արդյունքում հանգում ենք հետևյալին.

Շիրակի պետական համալսարանը ամենաշատ մասնագիտություններ և, հետևաբար, ամենաշատ դիմորդներ ունեցող համալսարանն է Շիրակի մարզում, երկրորդ հորիզոնականում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղը: Երեք տարիների ընթացքում ամենաքիչ թվաքանակով դիմորդներ ունեցել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղը: